ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների (ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան խոշորացված համայնքի Կամարիս բնակավայրի Սբ. Հովհաննես եկեղեցի) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.03.2026թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Արմինե Ստեփանյան /գնահատող/

Սուրեն Շաքարյան /գնահատող/

Աննա Խաչատրյան /բացող/

Վերգինե Սահակյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Սահակյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Աննա Խաչատրյանը

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/17 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/17 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Էլ. հասցե
1	«Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ	davit.hovhannisyan85@gmail.com
2	«Ռեստառտ 1» ՍՊԸ	vip.consalt.simba@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

4. Մասնակիցների առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկը.

Չափաբաժին	Գնման գինը ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումը			
		«Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ		«Ռեստառտ 1» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	3720000	1085000	1085000	3480000	3480000

5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2026թ մարտի 18-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 18.03.2026թ. ժամը 11:00-ին

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 **«Հուշարձանների վավերագրում»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Կնքված պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմում ներառված գեղանկարչի որակավորումը չի կարող գնահատվել բավարար, քանի որ վերջինիս դիպլոմը տրված է ոչ պետական չհավատարմագրված բուհի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6.2 **«Ռեստառտ 1»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 2026թ. մարտի 20-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 313 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 20.03.2026թ. ժամը 11:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում շտկել է հանձնաժողովի կողմից 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

9. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած և մերժված մասնակիցների մասին.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ-ին,**

2-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել **«Ռեստառտ 1» ՍՊԸ–ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման հայտարարության տեքստը, ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով ՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Լուսինե Իգիթյան /նախագահ/

_____ Արմինե Ստեփանյան

_____ Սուրեն Շաքարյան

_____ Վերգինե Սահակյան

_____ Արմինե Սահակյան /քարտուղար/